

ԴԻԼԻՋԱՆԻ «MOUNTAIN VILLAGE»-Ի ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿԱԾ ՆԱԽԱԳԻԾԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՄՐՑՈՅԹԻ ՄԸ ՅԱՂԹԱԿԱՆ

Հայ ճարտարապետ Սարգիս Սարգսեան, միջազգային ճարտարապետական «Bjarke Ingels Group» (BIG) գրասենեակի կազմին մէջ, յաղթած է Գերմանիոյ Համպուրկ քաղաքի պետական օփերայի նոր շէնքի նախագծման մրցոյթին: Սարգիս Սարգսեան համադրեկալարած է յաղթական նախագիծը, որ աչքի կը զարնէ ճարտարապետական համարձակ, ժամանակակից ու նորարարական լուծումներով:



Ուշագրաւ է, որ միջազգային նման մեծ ու հեղինակաւոր մրցոյթի մը մէջ յաղթած ճարտարապետը իր փորձառութիւնն ու գիտելիքները կը ներդրէ նաեւ Հայաստանի մէջ: «Proforma» ճարտարապետական գրասենեակի խումբին հետ ան մշակած է Դիլիջանի «Mountain Village» բնակելի համալիրի հայեցակարգը՝ առաջադէմ ու կանաչ արհեստագիտութիւնները, բնապահական բարձր չափանիշներն ու համարձակ ճարտարապետական լուծումները ներգաշակօրէն համադրելով տեղական բնապատկերին ու աւանդութիւններուն հետ:

“Սարգիս Սարգսեանի այս յաջողութիւնը կը վկայէ այն մասին, որ մեր ճարտարապետական համակարգին մէջ կը շարունակեն առաջնային տեղ գրաւել որակը, նորարարական արհեստագիտութիւններն ու միաժամանակ՝ աւանդութիւններու պահպանութիւնը: «Mountain Village»-ի նախաձեռնութիւնը կը պատկանի Ռուբէն Վարդանեանին եւ Վերոնիքա Զոնապենտին, որոնք նաեւ Դիլիջանի միջազգային դպրոցի հիմնադիրներն են, եւ անոնց համար մշտապէս կարեւոր եղած է միջազգային լաւագոյն արհեստագիտութիւններն ու փորձառութիւնը Հայաստան բերելը: Պէտք է նշեմ, որ դպրոցին շէնքը, իր ճարտարապետական լուծումներուն շնորհիւ, մրցանակներ բերած է Հայաստանին՝ հինգ անգամ յաղթելով շինարարական եւ ենթակառուցային միջազգային հեղինակաւոր մրցոյթներու մէջ: Վստահ ենք, որ «Mountain Village»-ը եւս նշանակալի դեր պիտի ունենայ Դիլիջանի գրաւութիւնը բարձրացնելու առումով”, – ըսած է «Mountain Village» նախագիծի ղեկավար Կլէյ Կրոշենքո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ UNITED AIRLINES-Ի ՀԵՏ ՔՆՆԱՐԿԱԾ Է ԼՈՍ ԱՆՃԸԼԸՍ - ԵՐԵՒԱՆ ՈՒՂԱԿԻ ԹՈՒԶՔՆԵՐՈՒ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի դեսպան Նարեկ Մկրտչեան անցեալ շաբաթ հանդիպում ունեցած է «United Airlines» ընկերութեան միջազգային կարգաւորման հարցերու տնօրէն Ջեյթան Ժէյնի հետ:

Հանդիպման ընթացքին զրուցակիցները քննարկած են Լոս Անճըլըսի եւ Երեւանի միջեւ ուղղակի թռիչքներու հաստատման կարելիութիւնը:

Դեսպան Մկրտչեան ընդգծած է Հայաստանի համար ուղղակի երթուղիին կարեւորութիւնը՝ նկատի ունենալով հայկական սփիւռքի զգալի ներկայութիւնը Միացեալ Նահանգներու մէջ եւ յատկապէս՝ Լոս Անճըլըս:

Միւս կողմէ, Ջեյթան Ժէյն ներկայացուցած է «United Airlines»-ի ռազմավարական առաջնահերթութիւնները, ոլորտի վերջին միտումները եւ ընկերութեան գործառնական նկատառումները:



ՏԻԿԻՆ ԱՐԵՒ ՄՈՒՏԵԱՆԻ ՎԻՃԱԿԸ. ԿԸ ՃԱՆՉՆԱ՞Ք ԶԱՅՆ

Գրեց՝ ԴՈԿՏ. ՀՐԱՉ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ*

Արեւմտահայերէնի պահպանման եւ կենսունակութեան շուրջ յառաջացած մարտահրաւէրները աւելի ու աւելի հրատապ դարձած են վերջին տասնամեակին: Ցատկապէս երբ ԻՒՆԵՍԿՕ-ն 2010-ին արեւմտահայերէնը դասեց «վտանգուած» լեզուներու կարգին, սփիւռքի մէջ անոր ապագան դարձաւ գլխաւոր քննարկման նիւթ: Համայնքային առաջնորդներ, դաստիարակներ, մասնագէտներ եւ ակադեմականներ սկսան միջոցներ եւ ծրագրեր որոնել դիմագրաւելու լեզուի անկումը:

Անշուշտ, այս խնդիրը միայն լեզուի կորուստի մասին չէ. ան մաս կը կազմէ աւելի խորքային առաջադրանքի մը՝ կապուած ինքնութեան պահպանման հրամայականին՝ համաշխարհայնացման, գաղթի եւ ձուլման ճնշումներուն տակ, որոնք շարունակ կը ձեւաւորեն Սփիւռքի հայ իրականութիւնը:

Արեւմտահայերէն խօսողներու նուազող թիւէն բացի, քանի մը այլ գործօններ եւս կը նպաստեն անոր աստիճանական անկման: Օրինակ՝ հայերէնը սկսած է դադրիլ վարչական գործունէութեան լեզուն ըլլալէ սփիւռքեան բազմաթիւ կազմակերպութիւններու համար: Նոյնիսկ՝ Լիբանանի մէջ, շատ անգամ ձեռնարկներու յայտարարութիւնը անգլերէն լեզուով կը սփռուի հանրութեան: Շատ տեղեր արեւմտահայերէնը խորհրդանշական



դարձած է, որովհետեւ սփիւռքեան բազմաթիւ կազմակերպութիւններ կը գործեն երկլեզու ձեւով: Միեւնոյն ատեն, Արեւմտահայերէն թերթերն ու մամուլը՝ որոնք երկար ատեն սփիւռքի մէջ լեզուական կենսունակութեան հիմնասիւններն եղած են, օրէ օր կը տկարանան: Օրաթերթերը ընթերցողներ կը կորսնցնեն, կը տառապին ֆինանսական սահմանափակումներէ եւ բովանդակութիւն արտադրելու հսկայական մարտահրաւէրներէ: Այսօր, ամբողջ Սփիւռքի մէջ միայն փոքր թիւով Արեւմտահայերէն օրաթերթ եւ շաբաթաթերթ կը շարունակեն հրատարակուիլ, մեծ մասամբ

թուային եւ հազուագիւտ տպուած տարբերակով:

Արեւմտահայերէնի այժմու վիճակը եւ «լուծումներու» մօտեցումները պատկերացնելու համար, փորձենք երեւակայել Տիկին Արեւ Մուտեան մը՝ ժամանակին շողուն ու վառ կին մը, որուն զաւակները անվերջ կը վիճին, թէ ինչպէս կրնան խնամել զինք: Կան տարբեր խումբեր, որոնք կը հոգան կամ մտահոգ են անոր ճակատագրով:

1. Մաքրակրօնները («Purist-ները»)

Առաջին խումբը կը կազմեն մաքրակրօնները՝ արեւմտահայերէնի ինքնակոչ պաշտպանները, մարտիկներն ու ոստիկանները: Այս մտաւորականները մեծ մասամբ Միջին Արեւելքի սփիւռքեան միջավայրին մէջ թրծուած են: Անոնք կը տեսնեն իրենց առաքելութիւնը որպէս «սուրբ պարտաւորութիւն» մը՝ պաշտպանելու եւ պահպանելու լեզուն «արեւմտահայերէնի վերջին կաթիլը»:

Այս խումբին համար Տիկին Արեւին վիճակը չափազանց ծանր է: Ան կը գտնուի հիւանդանոցի յատուկ վերակենդանացման բաժանմունքին մէջ, շնչառական խողովակի մը միացուած, գրեթէ հոգեվարքի մէջ: Purist-ները կը գանգատին սփիւռքեան հաստատութիւններու անտարբերութենէն, որոնք, ըստ իրենց, ձախողած են զայն «փրկելու»: Անոնցմէ շատեր կը հաւատան, թէ Հայաստանի Հանրապետութիւնը կրնայ ըլլալ վերջին յոյսը:

Բայց, գնահատելով հանդերձ անոնց մեծ նուիրումը, շատ գործնական լուծումներ չունին: Դպրոցներու եւ ուսուցիչներու ֆինանսաւորումը — այսինքն՝ «հիւանդանոցն ու բուժօրէնը» — անբաւարար է: Անոնց պատաս-

* Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան, ընկերաբան, սփիւռքագէտ, Սփիւռքի նորարարական ծրագիրներու հեղինակ եւ գործադիր:

խանը հիմնականին մէջ պաշտպանողական է՝ պահել արեւմտահայերէնը այնպէս ինչպէս որ էր անցեալին, ըստ իրենց պատկերացումին: Անոնց համար իսկական հայը ան է, որ ամբողջովին կը նմանի Տիկին Արեւին՝ այնպէս ինչպէս եղած էր ան անցեալին՝ անփոփոխ եւ զերծ օտար ազդեցութիւններէ:

2. «Մտաւորական խմբակը»

Ճիշդ հակառակ ուղղութեամբ կը գտնուի աւելի ազատ եւ լայնախոհ մտաւորական խումբ մը՝ յառաջագէմ, աշխարհիկ, խորապէս կրթուած արեւմտահայերէնի գրական եւ փիլիսոփայական աւանդութեանց մէջ: Անոնց մտածողութիւնը եւ ուշադրութիւնը յաճախ կը կեդրոնանայ մեր ժամանակներու երկու-երեք մեծ գրական եւ մտաւորական նշանաւոր դէմքերու շուրջ:

Այս խումբին համար Տիկին Արեւը մահամերձ չէ. ան ուղղակի կը ծերանայ՝ ժամանակի եւ հանգամանքներու ազդեցութեամբ: Ան հիւանդանոցի կարիք չունի, բայց պէտք ունի նուրբ, սիրառատ խնամքի՝ իր հասուն զաւակներուն ուշադրութեան, որոնք տակաւին տան մէջ կը խօսին իր հետ:

Այս խումբին հեռանկարը վերկենսաւորում է. մշակութային է, ոչ բժշկական: Անոնք շեշտը կը դնեն գրականութեան, ինքնաքննութեան եւ փիլիսոփայական նորոգութեան վրայ: Բայց անոնց ազդեցութիւնը կը մնայ նեղ շրջանակներու մէջ՝ հազուադէպօրէն շփուելով մաքրակրօններու կամ այլ յարակից մասնագէտներու հետ:

Նշուած երկու խումբերն ալ, ի վերջոյ, հակադիր խրամատներու մէջ կը գտնուին՝ իւրաքանչիւրը համոզուած թէ ինք միայն գիտէ Տիկին Արեւը փրկելու ձեւը:

3. Նոր սերունդը

Այս երկու խումբերուն միջեւ կանգնած է նոր սերունդ մը՝ տարիքով քսանէն երեսուններու միջեւ հայ երիտասարդներ, որոնք կը փորձարկեն նոր ձեւեր՝ կենսունակ պահելու արեւմտահայերէնը: Անոնք ոչ մաքրակրօն են, ոչ ալ աւանդապաշտ մտաւորականներ: Անոնց նուիրումը Տիկին Արեւին անկեղծ է, բայց անոնց գործելակերպը՝ ստեղծագործական, երբեմն խաղով ու արդի:

Այս սերունդը իր սէրը լեզուին հանդէպ կը ցուցաբերէ թուային մշակոյթով՝ փոթքաւթեր, YouTube ալիքներ, memes, առցանց հարթակներ եւ ընկերային ցանցեր: Հաստատութեանական իշխանութիւն չունին, բայց ունին տեսանելիութիւն, աշխուժութիւն եւ բնագոյնի գիտակցութիւն, թէ արեւմտահայերէնը պէտք է ապրի այնպէս ինչպէս որ ան է այսօր, ոչ թէ ինչպէս որ եղած էր:

Անոնց համար Տիկին Արեւը մեծ մայր է՝ գուցէ թոյլ, բայց սիրելի: Ան կարօտ է մտերմութեան աւելի քան պաշտպանութեան, աւելի զրոյցի քան սուգի: Թէ արդեօք այս սերունդը պիտի կարողանա՞յ երկարաժամկէտ ազդեցութիւն ունենալ կրթական կամ համայնքային կեանքի մէջ՝ տակաւին յստակ չէ: Բայց անոնց ներկայութիւնը անշուշտ նոր շունչ բերած է արեւմտահայերէնի ողիսականին:

4. Ուսուցիչները

Եւ կան ուսուցիչները՝ լեզուի ամենօրեայ պահապանները սփռուքեան դպրոցներուն մէջ: Անոնք կը տարբերին բնաւորութեամբ՝ ոմանք խիստ պահպանողներ են, ուրիշներ՝ բաց նորարարութեան: Շատեր յաճախ կը գտնուին երկմտանքի մէջ՝ մաքրակրօններու պաշտպանողական դիրքին եւ մտաւորականներու մշակութային մօտեցումին միջեւ, եւ միաժամանակ կը փորձեն կապ հաստատել նոր թուային սերունդին հետ:

Վերակենդանացման Քաղաքականութիւնը

Նկատի ունենալով Սփիւռքի աւանդական հաստատութիւններու կողմէ լուրջ ծրագրերու եւ ֆինանսաւորման պակասը, վերջին տարիներուն Գալուստ Կիւպէնկեան Հիմնարկութիւնը՝ արեւմտահայերէնի ծրագրերու ամէնէն կարեւոր հովանաւորներէն մէկն է եւ մեծ ազդեցութիւն ունի հիմնական հարցերու քննարկումներուն մէջ: Կիւպէնկեանի տարբեր ծրագրերու օժանդակութիւնը՝ գրական, թուային կամ մանկավարժական, ձեւաւորած է արեւմտահայերէնի գործնական ուղղութիւն մը: Բայց եւ այնպէս, ինչպէս որեւէ միջամտութիւն՝ ոչ բոլորը համակարծիք են Կիւպէնկեանի տեսիլքին: Երբ լեզու մը ճգնաժամի մէջ է, նոյնիսկ բարի մտադրութիւն ունեցող օգնութիւնը կրնայ դառնալ վէճի աղբիւր:

Արեւմտահայերէնի պայքարը միայն քերականութեան կամ բառապաշարի հարց չէ. ան ինքնութեան, պատկանելիութեան եւ գոյատեւման խնդիր է: Տիկին Արեւը տարեց է, բայց ան կենդանի է: Ան կը շարունակէ ապրիլ՝ թէ ICU-ի մէջ, թէ տունը խնամուող, թէ առցանց ընկերացած: Ան կը շնչէ դասարաններու, գրականութեան եւ աւելի ու աւելի՝ նոր սերունդի թուային աշխարհին մէջ:

Անոր ապագան կախեալ է ոչ մէկ խումբի «յաղթանակէն», այլ բոլոր ժառանգորդներուն՝ մարտիկներու, մտածողներու եւ երազողներու միասնական ձայնէն, որոնք պէտք է վերագտնեն Տիկին Արեւ Մուտեանին միջոցով «խօսելու» եւ ստեղծագործելու կարողութիւնը:

ԾԱԽԻԼ

«ARMÉNOPHILES» ՀԱՏՈՐԻՆ ԾՆՈՐՀԱՀԱՆԴԵՍԸ



Ուրբաթ, նոյեմբեր 14-ին, Շաւիլի հայկական եկեղեցւոյ «Սարգիս Պալապանեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հրայր Հրաչեանի եւ Արա Գրիգորեանի «ARMÉNOPHILES. Dictionnaire monographique» («ՀԱՅԱՍՏԱՆԻՆԵՐ. Մենագրական բառարան») գիրքին հրապարակային շնորհահանգէսը: «Kirk publishing» հրատարակչատան կողմէ լոյս ընծայուած այս նոր հատորը, որ կը պարունակէ նաեւ կարեւոր մատենագիտութիւն մը եւ շուրջ 900 անուններու ցանկ մը, օգտակար եւ գործնական միջոց մըն է՝ ճանչնալու համար բոլոր այն օտարագիրները, որոնք այս կամ այն ձեւով, աշխարհի տարածքին զօրակցած են Հայ դատին կամ իրենց ներգրուած ունեցած են հայ մշակոյթին մէջ:

Երեկոյթը սկսաւ Շաւիլի քաղաքապետ եւ երեկոյթի պատուոյ հիւր՝ Ժան-Ժաք Կիլէի խօսքով: Ան ներկայացուց իր՝ Հայաստանի կապուածութեան պատճառները՝ այդ շրջափակուած եւ թշնամիներով շրջապատուած երկրին, ուր ան այցելած էր 2017-ին՝ Տաւուշի մէջ արեգակնային կայաններ բանալու նպատակով, հոն՝ ուր գործած էր Փաթրիք Տէվէճեանը: Ապա ան վերահաստատեց Ֆրանսայի անվերապահ աջակցութիւնը Հայաստանին: Ներկաներու շարքին նրկատելի էին նաեւ Շաւիլի հոգեւոր հովիւ Տ. Գուրգէն քհնյ Աղաբաբեանը, «Anacra»-ի (Հայ նախկին ռազմիկներ) նախագահ Լեւոն Յովնանեանը, ինչպէս նաեւ ձեռնարկը կազմակերպող Շաւիլի Հայ Մշակութային Միութեան (ASCA) նախագահ Նաթալի Նիքոտեմ-Սարաճեանը:

Մշակութային միութեան նախագահ Սիւլվա Քելթենճեանի բարի գալուստի խօսքէն եւ Հրայր Հրաչեանի ու Արա Գրիգորեանի ներածականէն ետք, ուր անոնք պատմեցին գիրքին ստեղծման պատմութիւնը, ցուցադրուեցաւ պատահականութեամբ ընտրուած 25 անձնաւորութիւններու նուիրուած պաստառային ներկայացում (diaporama) մը: Սա առիթ ընծայեց ներկաներուն՝ գաղափար մը կազմելու բառարանի հարուստ բովանդակութեան մասին: Անոնցմէ կ'ուզեմ առանձնացնել երեք անուններ.

- **Մուսթաֆա Ազիզօղլու.** Յեղասպանութեան տարիներուն Մալաթիոյ քաղաքապետը, որհակառակ իր բոլոր ջանքերուն՝ չյաջողեցաւ կանխել իր քաղաքի հայ բնակչութեան տեղահանութիւնը: Սակայն, իր նկուղին մէջ քանի մը հայ պահելուն պատճառով, ան սպանուեցաւ 1921-ին իր իսկ որդւոյն ձեռքով, որ Թալէաթի «Իթիթիհատ վէ Թէրաքքի»-ին (Միութիւն եւ Յառաջդիմութիւն) անդամ էր:

- **Խոսէ Անթոնիօ Կուրիարան.** Սպանացի լրագրող, որ պատահական զոյր դարձաւ ԱՍՍԱԿ-ի կողմէ Մատրիտի մէջ 1980 Դեկտեմբեր 29-ին գործուած մահափորձի մը: Ոտքերէն ծանրօրէն վիրաւորուելէ եւ երկար ապաքինումէ ետք, ան որոշեց երթալ մինչեւ Պէլլուք եւ հանգիպիլ արարքի հեղինակ երիտասարդներուն հետ՝ հասկնալու համար անոնց դրդապատճառները եւ վերջապէս ներելու զանոնք՝ դառնալով անոնց դատի պաշտպանը:

- **Հանրի Սապի.** «CNRS»-ի հետազօտող-ճարտարագէտ, որ հանդիսացաւ քաղաքական ճարտարապետը եւ գլխաւոր շարժիչ ուժը Եւրոպական խորհրդարանի 1987 Յունիս 18-ի բանաձեւին (Սթրազպուրկ), որ կը ճանչնար Հայոց ցեղասպանութիւնը: Իր փափաքին համաձայն, իր աճիւններուն մէկ մասը այսօր կը հանգչի Երեւանի Ազգային պանթէոնին մէջ՝ Կոմիտաս Վարդապետի շիրիմէն ոչ հեռու:

Ներկաներուն կողմէ ուղղուած քանի մը հարցումներէ ետք, երեկոյթը վերջ գտաւ բարձր տրամադրութեամբ՝ գիրքերու մակագրութեամբ եւ եկեղեցւոյ Տիկնանց յանձնախումբին կողմէ պատրաստուած փոքր հիւրասիրութեամբ:



Ժ.-Ժ. Կիլէ կ'արտասանէ իր խօսքը. կողքին՝ Հրայր Հրաչեան եւ Արա Գրիգորեան